ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի խորհրդի նիստի 3-ը դեկտեմբերի 2013թ.

Նախագահ՝ Ա. Ցուցուլյան

Քարտուղար՝ Հ. Գասպարյան

Ներկա էին խորհրդի 8 անդամներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. ***Մասնագիտական խմբի հաշվետվություն:***
   /Զեկուցող Մ. Ա. Զաքարյան/
2. ***Ուսումնական խորհրդատուների հաշվետվություն:***

/Զեկուցող Ք. Վ. Օթարյան, Է. Կ. Օսիպովա/

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց ֆակուլտետի դեկան, խորհրդի նախագահ Ա. Վ. Ցուցուլյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա. Վ. Ցուցուլյանը:

Զեկուցումով հանդես եկավ «Բարձրագույն մաթեմատիկայի և ինֆորմատիկայի» ամբիոնի վարիչ Մ. Ա. Զաքարյանը: Նա ներկայացրեց «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտության հանձնախմբի կատարած աշխատանքը կապված կրթական ծրագրերի հետ:

Մ. Ա. Զաքարյանը մանրամասնեց կրթական ծրագրերի մասին, որոնք արտացոլում են նախնական գիտելիքները, դասավանդվող առարկաները, ուսումնառության ձևերը և կրթական արդյունքները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Հանձնախմբի անդամներ Ար. Հ. Մակարյանը, Մ. Կ. Մելիքյանը և Ա. Գ. Մարդանյանը: Նրանք կարևորեցին կազմված կրթագրքի պահանջները և նրա կատարումը, որի հիմանական չափանիշը ուսման որակի բարձրացումն է և կրեդիտային համակարգի գործառույթների խորացումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.-Ներկայացնել մասնաճյուղի գիտխորհրդի հաստատմանը՝ ֆակուլտետի կրեդիտային համակարգով ուսումնառության կրթագիրքը:

ԼՍԵՑԻՆ.- Օրակարգի երրորդ հարցի մասին ֆակուլտետի խորհրդի նախագահ Ա. Վ. Ցուցուլյանը ձայնը տվեց «Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա» մասնագիտության կուրսղեկ՝ Ք. Վ. Օթարյանին և «Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտության կուրսղեկ է. Կ. Օսիպովային: Նրանք հանգամանալից ներկայացրին ուսանողների հետ տարվող բազմաբնույթ աշխատանքների իրականացման մասին, որոնք իրականացվում են դեկանատի և ամբիոնների հետ համատեղ: Կարգապահությունը կարծես թե արդեն կայունացել է, կրճատվել են անհարգելի բացակայությունները, ուսանողները պատշաճ ձևով նախապատրաստվում են քննաշրջանին, ժամանակին իրականացվում են կուրսային աշխատանքների պահանջները /ԿՄՖ IV կուրս/ նշելով, որ ուսանողները աչալրջորեն նախապատրաստվում են կուրսային աշխատանքների պաշտպանությանը: Նրանք միաժամանակ ներկայացրին ուսման վճարների մուծումների մասին, որը ևս ընթացքի մեջ է:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Գ. Վ. Գուլակյանը, Հ. Ս. Գասպարյանը: Նրանք համակարծիք էին ներկայացված նյութին և արժանացավ հավանության:

ՆԱԽԱԳԱՀ **Ա. ՑՈՒՑՈՒԼՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ **Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ**